Հավելված 2
« ԱՄԱՀ-ՄԱԱՊՁԲ-20 /05 »* ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍԱՆՀԻԳԵՆԻԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *ԱՄԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/05*

ք. Արտաշատ «21» փետրվար 2020 թ.

Արտաշատի համայնքապետարան-ը ի դեմս համայնքի ղեկավարԿարեն Բենիամինյան-ի, որը գործում է կազմակերպության-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Հ.Վ.Գ.>>ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գագիկ Համբարձումյան-ի, որը գործում է ընկերության-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից

ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __2__ օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է _600000/վեց հարյուր հազար/__ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության _3__ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _5_ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող՝ յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:[3]

---

[3] *Եթե պայմանագիրը կնքվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով, ապա սույն կետից հանվում է 2-րդ նախադասությունը:*

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _5_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Արտաշատի համայնքապետարան	<<Հ.Վ.Գ.>> ՍՊԸ
Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/14
ՀՎՀՀ 04201153	Հ/Հ 163098208792
Հ/Հ 900412201023	Հայէկոնոմբանկ ԲԲԸ
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն	ՀՎՀՀ 04220172
Համայնքի ղեկավար Գ.Բենիամինյան	տնօրեն Գ.Համբարձումյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«21» փետրվար 2020թ. կնքված
ԱՄԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/05 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/<< դրամ	ընդհանուր գինը/<< դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	44411110/2	ջրի ծորակ, 1 փականով	Կիսաշրջանաձև ծորակ, 1 փականով, նիկելապատված	հատ	2000	20000	10	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 5 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 5 հատ
2	39221270/2	թաս պլաստմասսայե	***Թաս պլաստմասե տրամագիծը 30-35 սմ , խորությունը հատակից մինչև եզրը 15-20 սմ: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված «« Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի>>:(***	հատ	200	4000	20	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 8 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 12 հատ
3	39831247/2	ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ)	Սպիտակեցնող և ախտահանիչ հատկություններով հեղուկ, մակերևութային ակտիվ նյութեր 3,5 տոկոս նատրիում հիպոքլորիդի պարունակությամբ,	լիտր	150	7500	50	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	50	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 20 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-

			ակտիվ քլորի պարունակությունը՝ 90-150 կգ/մ3: Փաթեթավորումը՝ 1լ-5լ տարաներով /ժավել/							ներառյալ 30հատ
4	39812410/2	կահույքի փայլեցման միջոց	Փայլեցնող միջոց կահույքի համար, 300մլ աերոզոլային փաթեթվածքով: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N1795-Ն որոշմամբ հաստատված 'Մակերևույթաակտիվ միջոցների և Մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի'	հատ	900	18000	20	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 8 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 12հատ
5	39831283/4	հատակի լվացման լաթ	***Հատակի լաթ 80X100սմ չափսի՝ բազմակի օգտագործման համար: Օգտակար ծառայում է չոր և խոնավ վիճակում: Գերազանց մաքրում է կեղտը: Չորացնում է և չի թողնում հետքեր և թելիկներ: Շատ հարմարավետ է մեծ տարածքների մաքրման համար: Բաղադրությունը 100% բամբակ խիտ գործվածքով:Գույնը սպիտակ: Լաթի վրա մի անկյունում կարված պիտակ կտորի անվանումով: Պահպանման ժամկետը անսահմանափակ: Փաթեթավորված յուրաքանչյուրն առանձին պոլիէթիլենային թափանցիկ տոպրակով: Քաշը չոր վիճակում 180 գրամ:***	հատ	500	25000	50	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	50	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 20 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 30հատ
6	44411300/2	լվացարաններ	Լվացարանի լայնությունը 46-48 սմ, բարձրությունը 80-85 սմ, Խորությունը մեջտեղի մասում 12սմ-14սմ, ոտքի երկարությունը	հատ	23000	69000	3	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 2 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-

			64 սմ: Նյութը՝ կերամիկական, որակյալ:							ներառյալ 1հատ
7	39835000/2	հատակ մաքրելու ձող, պլաստմասե, փայտյա	***1,5-2 մ երկարության փայտե, լաքապատված, ներքևի մասի չափսերը 0,5մ***	հատ	1000	10000	10	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 5 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 5հատ
8	39831242/3	լվացքի փոշի ձեռքով լվանալու համար	Սպիտակ, բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի: Փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի» համաձայն: Որակյալ: 0.5 կգ կամ 1կգ տարաներով:	կիլոգրամ	800	24000	30	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	30	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 14 կգ. հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 16կգ.
9	39836000/2	ավել, սովորական	***քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40)***	հատ	1000	25000	25	Ք.Արտաշատ Օգոստոսի	25	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 12 հատ

								23/62		հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 13հատ
10	39839200/2	գոգաթիակ, աղբը հավաքելու համար, հասարակ	Նյութը պլաստիկ չափսերը 33.5 * 23*7 սմ Արտաքին տեսքը կիսակլոր	հատ	150	1500	10	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 5 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 5հատ
11	31531210/4	Էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W	***Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սեկաձև, կոթառը E 27/27 տիպի, ԳՕՍՏ 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ,Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգ***	հատ	100	10000	100	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	100	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 50 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 50 հատ
12	33761400/3	թղթե անձեռոցիկներ	***Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, տարբեր չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի***	հատ	150	15000	100	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	100	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 50 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 50 հատ

13	19641000/2	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	***Պոլիէթիլայնե,կենցաղային թափոնների համար, 1հատի տարողությունը 60լ, տեղավորվող զանգվածը 12կգ-ից ոչ պակաս, սև գույնի, լայնությունը 65սմ և ավելի, բարձրությունը 70սմ և ավելի: Մեկ փուփի քանակը 30 և ավելի:***	հատ	20	5000	250	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	250	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 120 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 130 հատ
14	31221180/2	լամպերի կոթառներ	լամպերի կոթառներ ***6,3/10 Ա, 250 Վ, ԳՕՍՏ Ռ 51322.1-99 և ԳՕՍՏ 7396.1-89, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և ԳՕՍՏ 12.2.007.0-75***	հատ	150	7500	50	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	50	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 25 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 25 հատ
15	31651400/2	մեկուսիչ ժապավենների	նախատեսված հոսանքի մեկուսացման համար, պոլիմերային ժապավեն, լայնությունը 17մմ, 10մ երկարությամբ, գլանափաթեթներով	հատ	150	3000	20	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 10 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 10 հատ
16	39831280/4	ապակի մաքրելու միջոց	Ապակիների մաքրող նյութ 500 մլ տարողությամբ պլաստմասե տարաներով , չափածրարված, փոշեցրիչով: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004 թ. դեկտեմբերի 16-ի N1795-ն որոշմամբ հաստատված << Մակերևույթաակտիվ միջոցների և մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի >>	լիտր	1000	10000	10	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 5 լիտր հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 5 լիտր

17	33761000/4	զուգարանի թուղթ, ռուլոնով	Երկշերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. առնվազն 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»: Որակյալ:	հատ	100	25000	250	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	250	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 120 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 130 հատ
18	31685000/2	էլեկտրական երկարացման լար	***Չափսը: 5տ 5 մ կամ 110 Ա, 250 Վ միացման մանրակներով , ԳՕՍՏ Ռ 51324.1-99 կամ համարժեք: Անվտանգությունն՝ ըստ ԳՕՍՏ 12.2.007.0-75 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի***	հատ	2500	25000	10	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 5 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 5 հատ
19	31686000/2	խրոց սովորական	***էլեկտրական խրոց 6,3/10 Ա, 250 Վ, ԳՕՍՏ Ռ 51322.1-99 և ԳՕՍՏ 7396.1-89, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման***	հատ	150	3000	20	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 10 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 10 հատ

			էլեկտրական քավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և ԳՕՍՏ 12.2.007.0-75							
20	39224341/3	աղբարկղ, պլաստմասե	Աղբարկղ պլաստմասայից,մակերևույթը ծակոտկեն: 30սմ բարձրությամբ, կտրված կոնաձև ներքևը 17 սմ տրամագծով, վերևը՝24սմ	հատ	2000	20000	10	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 5 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 5 հատ
21	39224342/2	աղբարկղ, մետաղյա	Աղբաման պատրաստված էմալապատ մետաղյա թիթեղից, տարողությունը 5լ, կափարիչը ոտքի սեղմակի միջոցով բացվող:	հատ	4000	20000	5	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 2 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 3 հատ
22	31684100/2	վարդակ երկբ—եռանի	***Վարդակ Legrand կամ համարժեք, 2 տեղանոց պլաստմասե UL-94V, 1 port RJ 11 բնիկով, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000 MOм, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 30 0C-ից մինչև +80 0C, սպիտակ կամ կաթնագույն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. Փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգ***	հատ	650	26000	40	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	40	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 20 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 20 հատ
23	39831276/2	զուգարաններ ի մաքրման նյութեր	Զուգարանակոնքի և վաննաների լվացող և մաքրման միջոց, հեռացնում է ժանգը և նստվածքը, հանդիսանում է մանրեասպան և ախտահանիչ միջոց՝ սպիտակի կամ կանաչի, կապույտի կամ այլ գույների բաց երանգներով, օգտագործված	լիտր	600	18000	30	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	30	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 15 լիտր հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 15լիտր

			հուտավորիչ՝ հոտով, 1%-անոց ջրային լուծույթի pH-ը՝ 2-7, ջրում չլուծվող մնացորդի զանգվածային մասը՝ 70%-ից ոչ պակաս, խոնավությունը՝ 2%-ից ոչ ավելի, մաքրող հատկությունը՝ 85%-ից ոչ պակաս, պետք է լինեն ոչ թունավոր և հրակայուն, փաթեթավորված՝ 750 մլ պոլիմերային կամ այլ տարաներում, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի":							
24	39224331/2	դույլ պլաստմասե	***Պլաստմասսայե, 10 լ տարողության, բռնակով ,ՀՍ 124-2007, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված ,Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգիե***	հատ	500	5000	10	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 5 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 5 հատ
25	39221480/2	զուգարանի խոզանակներ	***Բարձրությունը '35-40սմ, Սրբելու հյուսվածքները պատված կոշտ ախտահանող թելիկներով, Հիմնական մասերը 'պոլիպրոպիլեն***	հատ	1500	15000	10	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 5 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 5 հատ
26	44192620/2	մեխ մետաղական	Մեխ 200մմ,	կիլոգրամ	750	750	1	Ք.Արտաշատ Օգոստոսի	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 1կգ.

								23/62		
27	39221350/2	մեկանգամյա օգտագործման բաժակներ	Մեկանգամյա օգտագործման բաժակ, պլաստիկ, 100-150գր տարողությամբ:	հատ	10	10000	1 000	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	1 000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 500 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 500 հատ
28	42131480/2	փականների մասեր	Փականի միջուկ 7սմ, երեք օրինակ բանալիով	հատ	1200	18000	15	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	15	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 8 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 7 հատ
29	39811300/2	հոտազերծիչ, օդի	Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակումային 300 մլ բալոնիկով, թարմ ծաղկային կամ ծաղկային բուրմունքով, պատրաստված բնական նյութերից, որոնք արագ հեռացնում են տհաճ հոտերը,:	հատ	1000	25000	25	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	25	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 12 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 13 հատ
30	39522250/4	փոշու հավաքման կտորներ	Փոշի մաքրելու համար 20x20սմ չափ	հատ	200	10000	50	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	50	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 20 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 30 հատ
31	39831260/2	օճառի տարա	10- 15 սմ երկարությամբ , 5-8 սմ երկարությամբ, խորությունը 3-4 սմ, կապարիչով, նախատեսված օճառի համար, ներքևի մասում կտրվածքներով :	հատ	250	3750	15	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	15	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 7 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 8 հատ
32	39831245/3	օճառ, հեղուկ	***Մակերևութաակտիվ նյութերից և փարթեր կենսաբանական ակտիվ նյութերի լուսամզվածքներից պատրաստված օճառ, հոտավետ, ջրածնային իոնների խտությունը՝ 7-10 pH, ջրում չլուծվող խառնուկների***	լիտր	1300	32500	25	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	25	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 12 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 13 հատ

			պարունակությունը ոչ ավել՝ 15%-ից, չօճառացվող օրգանական նյութերի և ճարպերի պարունակությունը՝ ոչ ավել 0,5%-ից, փրփրագոյացնող հատկությունը[a] ոչ պակաս 300 սմ3-ից, անվտանգությունը ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված 'Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի' 0.33 լ-0.5 լ տարողությամբ տարաներով							
33	39831274/2	էկրանի մաքրման նյութեր	***Մաքրող և փայլեցնող միջոց համակարգչի էկրանի մաքրման համար, ցողացիր տարայով 125մլ ,և մաքրելու համար նախատեսված իր հատուկ սրբիչով 50 հատ,***	հատ	1500	22500	15	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	15	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 8 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 7 հատ
34	39831241/2	օճառ, ձեռքի	Չորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ «Չեզոք» և «Էքստրա» տեսակների համար 78 գ, «Սովորական» տեսակների համար 74 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ «Չեզոք» տեսակի համար բացակայում է, «Էքստրա» տեսակի համար՝ 0,2 %, «Սովորական» տեսակի համար՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը	կիլոգրամ	2500	15000	6	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	6	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 3կգ. հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 3կգ.

			(տիտրը)՝ (36-41) °C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումն ըստ ԳՕՍ 28546-2002: Մեկ կտորի զտաքաշը 80-100 գրամ:Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 80%:							
35	18421130/3	ձեռնոցներ	Տեխնիկական ձեռնոցներ՝ ռետինե, ձգելիս ամրության պայմանները՝ 16(160) ՄՊա (կգուժ/սմ2)-ից ոչ պակաս, պատռվելիս հարաբերական երկարացումը՝ 800 %-ից ոչ պակաս, պատռվելուց հետո հարաբերական մնացորդային երկարությունը՝ 12 %-ից ոչ ավել, պատռվելու նկատմամբ դիմադրությունը՝ 20 կգուժ/սմ2-ից ոչ պակաս, թթվահիմնաթափանցելիությունը (pH)՝ 1-ից ոչ ավել, ձեռնոցների մակերեսին արատներ չպետք է լինեն, I տիպի՝ (M, L,XL չափի) հաստությունը՝ 0,6-0.9մմ, երկարությունը 300մմ ոչ պակաս,	զույգ	500	5000	10	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 5 զույգ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 5 զույգ

36	44521120/2	դռան փականներ	Դռան փական բռնակով, դռան ձգվող մասը 12 սմ, միջուկի չափսը 7սմ, երեք օրինակ բանալիով,	հատ	3000	30000	10	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 5 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 5 հատ
37	39221490/2	սպունգներ	Ուղանկյունաձև, երկարությունը 120 մմ, լայնությունը 70մմ, հաստությունը 25մմ, մի կողմից երեսապատված արհեստական կտորով: Որակյալ:	հատ	100	1000	10	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 4 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 6 հատ
38	42131490/2	սիֆոն	Ճկվող խողովակ սպիտակ գույնի, երկարությունը 12 սմ,	հատ	1500	15000	10	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում 4 հատ հուլիսի 01-ից հուլիսի 15-ներառյալ 6 հատ

ԳՆՈՐԴ

Արտաշատի համայնքապետարան
Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62
ՀՎՀՀ 04201153
Հ/Հ 900412201023
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Կ.Բենիամինյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Հ.Վ.Գ.>> ՍՊԸ
Ք.Արտաշատ Օգոստոսի 23/14
Հ/Հ 163098208792
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
ՀՎՀՀ 04220172
տնօրեն Գ.Համբարձումյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 20 » փետրվար 2020թ. կնքված
ԱՄԱՀ-ՄԱԱՊՁԲ-20 /05 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	44411110/2	ջրի ծորակ, 1 փականով			10000	10000	10000	10000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
2	39221270/2	թաս պլաստմասսայե			1600	1600	1600	1600	4000	4000	4000	4000	4000	4000	4000
3	39831247/2	ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ)			3000	3000	3000	3000	7500	7500	7500	7500	7500	7500	7500

4	39812410/2	կահույքի փայլեցման միջոց			7200	7200	7200	7200	18000	18000	18000	18000	18000	18000	18000
5	39831283/4	հատակի լվացման լաթ			10000	10000	10000	10000	25000	25000	25000	25000	25000	25000	25000
6	44411300/2	լվացարաններ			46000	46000	46000	46000	69000	69000	69000	69000	69000	69000	69000
7	39835000/2	հատակ մաքրելու ձող, պլաստմասե, փայտյա			5000	5000	5000	5000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
8	39831242/3	լվացքի փոշի ձեռքով լվանալու համար			11200	11200	11200	11200	24000	24000	24000	24000	24000	24000	24000
9	39836000/2	ավել, սովորական			12000	12000	12000	12000	25000	25000	25000	25000	25000	25000	25000

10	39839200/2	գոգաթիակ, աղբը հավաքելու համար, հասարակ			750	750	750	750	1500	1500	1500	1500	1500	1500	1500
11	31531210/4	էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W			5000	5000	5000	5000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
12	33761400/3	թղթե անձեռոցիկներ			7500	7500	7500	7500	15000	15000	15000	15000	15000	15000	15000
13	19641000/2	պոլիէթիլենային պարկ, աղբի համար			2400	2400	2400	2400	5000	5000	5000	5000	5000	5000	5000
14	31221180/2	լամպերի կոթառներ			3750	3750	3750	3750	7500	7500	7500	7500	7500	7500	7500
15	31651400/2	մեկուսիչ ժապավեններ			1500	1500	1500	1500	3000	3000	3000	3000	3000	3000	3000

16	39831280/4	ապակի մաքրելու միջոց			5000	5000	5000	5000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
17	33761000/4	զուգարանի թուղթ, ռուլոնով			12000	12000	12000	12000	25000	25000	25000	25000	25000	25000	25000
18	31685000/2	էլեկտրական երկարացման լար			12500	12500	12500	12500	25000	25000	25000	25000	25000	25000	25000
19	31686000/2	խրոց սովորական			1500	1500	1500	1500	3000	3000	3000	3000	3000	3000	3000
20	39224341/3	աղբարկղ, պլաստմասե			10000	10000	10000	10000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
21	39224342/2	աղբարկղ, մետաղյա			8000	8000	8000	8000	20000	20000	20000	20000	20000	20000	20000

22	31684100/2	վարդակ երկբ—եռանի			13000	13000	13000	13000	26000	26000	26000	26000	26000	26000	26000
23	39831276/2	զուգարանների մաքրման նյութեր			9000	9000	9000	9000	18000	18000	18000	18000	18000	18000	18000
24	39224331/2	դույլ պլաստմասե			2500	2500	2500	2500	5000	5000	5000	5000	5000	5000	5000
25	39221480/2	զուգարանի խոզանակներ			7500	7500	7500	7500	15000	15000	15000	15000	15000	15000	15000
26	44192620/2	մեխ մետաղական			750	750	750	750	750	750	750	750	750	750	750
27	39221350/2	մեկանգամյա օգտագործման բաժակներ			5000	5000	5000	5000	10000	10000	10000	10000	10000	10000	10000

28	42131480/2	փականների մասեր			9600	9600	9600	9600	18000	18000	18000	18000	18000	18000	18000
29	39811300/2	հոտազերծիչ, օդի			12000	12000	12000	12000	25000	25000	25000	25000	25000	25000	25000
30	39522250/4	փոշու հավաքման կտորներ			4000	4000	4000	4000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
31	39831260/2	օճառի տարա			1750	1750	1750	1750	3750	3750	3750	3750	3750	3750	3750
32	39831245/3	օճառ, հեղուկ			15600	15600	15600	15600	32500	32500	32500	32500	32500	32500	32500
33	39831274/2	էկրանի մաքրման նյութեր			12000	12000	12000	12000	22500	22500	22500	22500	22500	22500	22500
34	39831241/2	օճառ, ձեռքի			7500	7500	7500	7500	15000	15000	15000	15000	15000	15000	15000
35	18421130/3	ձեռնոցներ			2500	2500	2500	2500	5000	5000	5000	5000	5000	5000	5000

36	44521120/2	դռան փականներ			15000	15000	15000	15000	30000	30000	30000	30000	30000	30000	30000
37	39221490/2	սպունգներ			400	400	400	400	1000	1000	1000	1000	1000	1000	1000
38	42131490/2	սիֆոն			6000	6000	6000	6000	15000	15000	15000	15000	15000	15000	15000

ԳՆՈՐԴ
Արտաշատի համայնքապետարան
Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62
ՀՎՀՀ 04201153
Հ/Հ 900412201023
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Կ.Բենիամինյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<<Հ.Վ.Գ.>> ՍՊԸ
Ք.Արտաշատ Օգոստոսի 23/14
Հ/Հ 163098208792
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
ՀՎՀՀ 04220172
տնօրեն Գ.Համբարձումյան

/ստորագրություն/
Կ.Տ